

ՓՈՒՆՁ

ԱՂԳԱՅԻՆ

Մայրաքաղաքս գտնուող տիվրիկցի ազգայիններէն 30—40 հոգի՝ անցեալ շաբաթ օրը շուկան Գափամաճի արհեստաւորաց գլխաւորներուն երթալով ազադակաւ և ամբողջ բողոք բարձեր են Տիվրիկի վաղըֆներուն և կալուածոց հաշուոց 15 տարիէ հետէ բարձի թողի մնալուն համար . և պահանջեր են որ այդ հաշիւները տրուին :

Շուկայէն նոյն պահուն անցնող մէկը այս լուրը տալով մեզ, մեր հետաքրքրութիւնը շարժեցաւ, և հետեւեալ տեղեկութիւնները ամփոփեցինք, որ ընդհանուր Աղբիս ծանօթութեան արժանի են, և մասնաւորապէս Պատրիարքարանի ուշադրութիւնը կը հրաւիրեմք :

Ասկէց 140 տարիի չափ առաջ Տիվրիկի ազգայնոց նախահաւք, մէջերնին ընկերութիւն կազմեր են, շաբթէ շաբաթ մէկ կամ երկերկու փարայ տարու, կալուածներ ունենալու և Տիվրիկի վարժարանն հոգալու նպատակաւ :

Այդ ընկերութիւնը, վերջին լուսաւորեալ ըսուած ժամանակաց մէջ հաստատեալ ընկերութեանց պէս՝ ասուպի նման երեւիլն ու անհետիլն մէկ չէ ըրեր . այլ շարունակեր է, և հետզհետէ յառաջ երթալով՝ 22 կտորի չափ տուն ու խանութ վաղըֆ ունեցեր է, 15 կըտորի չափ կալուածոց տէր է եղեր, թող ունեցած 1200 գօնուօլտէն, 40 երկաթուղոյ բաժնետոմսն, և 200 հազար զրուշի չափ պատրաստ դրամք :

Այդ ընկերութիւնը ժամանակին կայսերական բարձրագոյն հրովարտակօք նուիրագործուեր, և վերջապէս հաստատուն վաւերագրովք ու կտակագրովք հոգաբարձութիւնը Գափամաճը արհեստաւորաց յանձնուեր է, և ցարդ Տիվրիկի և շրջակայ քանի մը գիւղօրէից վարժարանաց պիտոյքը կհոգացուի :

Բայց, 15 տարիէ հետէ հաշիւ տրուած չէ եղեր . և ահա՛ այդ հաշիւը կպահանջեն :

Այսպիսի բազմադիւն և նախանձելի ընկերութեան մը նմանը դեռ տեսնուած չէ մեր ազգին մէջ, և այս՝ 140 տարի յառաջ, թանձրամած խաւարի տիրապետութեան ժամանակ համարուած դարու մէջ հաստատուած :

Կբարձրացունենք մեր ձայնը՝ տիվրիկցի ազնիւ ազգայնոց հետ, կբողոքեմք և կպահանջեմք, որ բարձի թողի եղած հաշիւները տրուին, և դայթակղութեան ու յուզման տեղի չտրուի :

Այդ ընկերութեան հիմնադիր՝ անմահ յիշատակաց արժանի տիվրիկցոց սըրբազան ոսկերք ալ կբողոքեն այս զանցառութեան դէմ . և ո՛վ որ հեղինակ է

այս զանցառութեան՝ անիծից ու դատապարտութեան արժանի կըլլայ :

Մեր պարաքն է՝ բողոքել, անդագար բողոքել, մինչև որ այս հաշուոց խնդիրը կարգադրուի :

Միանգամայն մեր պարաքն է՝ այս անգուգահան ընկերութիւնը ամեն օր յիշել և իբրև և ազգասէր ու յառաջադիմասէր պարծեցող անձանց աչքին առջև դնել : Պէտք է միշտ պօռանք . — Օրէնակաւ ՏԵԼԵԳՐԱԳՐԵՐՆԵՐՆԵՐ :

Ամասիայէն դուրս հետեւեալ տողերը՝ ցաւով կհրատարակեմք :

« Ի Մարզուան Աժաէրեան Սիման անուն մէկը՝ իւր հետ քանի մը չօրպաճի արբանեակ ունենալով՝ ժողովուրդն այն աստիճան հարստահարած է, որ վերջապէս գեր. Եղեսեանի նախորդին օրով տկար ժողովուրդն ստիպուեր է յօտար կրօն ապաստանիլ :

« Յիշեալ Աժաէրեանը, ի բացակայութեան գեր. Եղեսեանի, ազգային ժողովոյ ատենապետ կարգեալ էր :

« Այս Աժաէրեանի քով հետզհետէ մեծագումար հաշիւներ մնացած են ի վաղուց մինչև ցարդ . բայց ո՛չ ոչ ոք կըրցեր է հաշիւ պահանջել, կամ յետո կասեցունել նորանոր հաշիւներէ : Ահա այս եղած է վիճակայնոց արդի թշուառութեան, և Գեր. Եղեսեանի թախառակաւնութեան բուն իսկ գլխաւոր պատճառը :

« Յիշեալ Աժաէրեանը՝ արդեւք եղած է Սեբաստիոյ գեր. Պետրոս վարդապետի, ի Մարզուան Սահմանագրութիւն գործադրելու, զորմէ տեղեկագրած է Նորին գերապատուութիւնը ի Պատրիարքարան՝ 1873 մայիս կամ յունիս ամսոյ մէջ ի Մարզուանէ, յաւուրս Խրիմեան Սրբազանի :

« Այս Աժաէրեան՝ իւր արբանեակներովը միացած՝ բողոքադիր կուտայ տեղական կառավարութեան, որով կարող կըլլայ՝ քուէարկութեան գործողութիւնը արդելու ի Մարզուան, զորս իմացուցած է Պատրիարքարանի՝ Սահմանագրութեան գործադրիչ գեր. Պետրոս վարդապետ :

« Ահա՛, այս Աժաէրեանը, հիմա իր զաւակներովը, փեսաներովը, և բոլոր իր պարագաներովը, Լուսաւորչական Ս. Եկեղեցին ուրանալով, և մեր Ս. Եկեղեցւոյ խել մը հաշիւները շատ տարիներէ հետէ իր միապետական անընկճելի զօրութեամբը մինչև հիմա շարունակ չտալէն յետոյ, հիմա բողոքական եկեղեցւոյ հաղորդական անդամ եղեր է, իր հարստահարութեանց պակասը լեցունելու համար, և եթէ յաջողի՝ բողոքականաց կողմէն տեղական կառավարութեան ժողովոյ անդամ ըլլալու համար :

« Ժամէ արդ, որ կեդրոնական վար-

չութիւնը դարման գանէ՝ վիճակայնոց ապագայ և անկանգնելի կործանման . այն վիճակայնոց կըսեմ, որոց ազի արտասուքով դուրս ձգուած հարիւրաւոր թուղթերէն և ո՛չ մէկը՝ իւր ժամանակին կարեւորութիւն չգտաւ Պատրիարքարանի առջեւ :

Ազգային տրոյ խնդրոյն վրայ խորհող և առաջարկութիւն ընող պատուարժան ազգայնոց ծանօթութեան համար, արժան համարեցաք օրինակել լրագրոյս միջոցաւ՝ Գաղաքական ժողովոյ կողմանէ ազգային ժողովոյ վերջին նստիւններկայացեալ ծրագիրն ազգային տրոյ :

« Ազգային վարչութեան Գաղաքական ժողովս կեդրոնական տրոյ բաշխման և հաւաքման խնդիրն ի նկատողութիւն առնելով՝ հարկ դատեց այն մասին ծրագիր մը պատրաստել, զոր աւաստիկ կը փութայ ներկայացնել ազգային ժողովոյդ ի պարտուպատշաճ անօրէնութիւն :

Գաղաքական ժողովս հարկ կը համարի նաև յաւելցնել թէ Սահմանագրութեան 93 ըդ. յօդուածին տրամադրութեան համեմատ դաւառներուն կողմէն կեդրոնական մատուկին տրուելու մինչև ցարդ սովորութիւն եղած տուրքին բաշխման և հաւաքման եղանակի խնդիրն՝ բոլորովին ազգային ժողովոյդ պատկանելով, Գաղաքական ժողովս իւր ներկայ ծրագրին մէջ այդ մասին կարծիք մը յայտնելն արժան չդատեց :

Ուղղի որոյ վերաբերեալ կանոնադրութիւն

1. Ամէն ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակի ու շահու տէր և իւր բնակութիւնը Պօլիս հաստատած, պարտական է կեդր. մատուկին տարեկան տուրք մը տալու :

2. Այս տուրքը ութն աստիճանի բաժնուած է, այսինքն Ա. 300 . Բ. 250 . Գ. 200 . Դ. 150 . Ե. 100 , Զ. 75 , Է. 50 . Ը. 25 :

3. Առ նուազն 75 դր2 տարեկան տուրք վճարողն ըստ սահմանագրութեան երեսօտիական ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունք կ'ունենայ :

4. Թաղ. խորհուրդները պիտի հրաւիրեն ի խորհրդարան իրենց թաղին մէջ բնակութիւն հաստատող և տուրք տալու կարողութիւն ունեցող ազգայինները, և հետեւին համահաճութեամբ պիտի որոշեն տալու տուրքին որքանութիւնը, զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայինը իւր ստորագրութեամբը յատուկ տետրակի մը մէջ :

5. Տրոյ վճարումը դիւրացնելու համար տարեկանը երկու վեցամսեայ բաժիններու բաժնուած է . և տարեկանը մէկ անգամէն չկրցող վճարողները երկու վճարմամբ պիտի հատուցանեն, վեց ա-

միսն անգամ մը վեցամսեայ բաժիննին վճարելով կանխով :

6. Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ Թաղ. խորհուրդն երբևէ չի մտնող ազգայինէ մը պայմանա- ժամէն երեք ամիս ետքը տակաւին ան- վճարելի ձգուած ու գիշուած տուրքե- րը առնուելէն ի զատ, նաև տուրքին վը- րայ 10 առ 10 իբր տուգանք պահան- ջուելէն ու առնուելէն ետքը նոյն անձին գործը պիտի տեսնուի :

7. Տուրքին տրուած ըլլալը պիտի հաս- տատուի վճարողին քովը գանուած ըն- կալագրէն, որ ստորագրեալ պիտի ըլլայ հաւաքիչէն կեդր. մատուկին գանձապա- հէն, և Պատրիարքարանի կնքով վաւե- րացեալ :

8. Մէկն իր տուրքը ստորագրելէն ետքը նոյն տարուան տուրքին մէկ մասը կամ ամբողջը անվճար մնալով եթէ վախ ճանի, այդ պարտքը ընտանիքը կամ ժա- ուանգորդը վճարելու պարտական է :

9. Ամեն Թաղ. խորհուրդ պարտա- ւորեալ է ամեն տարի յատուկ ցուցակով մը հաղորդել կեդր. վարչութեան իւր Թաղը նոր եկողները և ուրկէ գալերնին, գացողները և ուր երթաննին, նոր շա- հու տէր եղողները, իրենց աստիճանին փոփոխութիւն ուղղողները և վերջապէս վախճանողները :

10. Տուրքը վարչութեան կողմէ ընտ- րեալ ընդհանուր հաւաքիչներու ձե- ոօք պիտի հաւաքուի, և հաւաքեալ գու- մարին վրայ 5 էն մինչև 10 առ 10 հա- ւաքչաց պիտի տրուի իբր ծախք և վար- ձատրութիւն :

11. Ամեն գաւառաբնակ հայ որ չա- փահաս է և վաստակի ու շահու տէր՝ պարտաւորեալ է իր բնակած գաւառին ազգային գաւառական մատուկին տարե- կան տուրք մը առալ :

12. Այս տուրքը եօթն աստիճանի բաժնուած է, Ա. 150. Բ. 100. Գ. 75. Դ. 50. Ե. 25. Զ. 12. Է. 6 :

13. Չորրորդ յօդուածին համեմատ ինչպէս Պօլսոյ Թաղերը՝ նոյնպէս և գա- ւառները Թաղ խորհուրդը պիտի հրա- ւիրեն ի խորհրդարան իրենց Թաղին մէջ բնակութիւն հաստատող և տուրք տա- լու կարողութիւն ունեցող ազգայիններ- րը, և հետեւին համահաճութեամբ պի- տի որոշեն տալու տուրքին որքանու- Թիւնը, զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայինը իւր ստորագրութեամբը յա- տուկ տեսարակի մը մէջ :

14. Տուրք վճարողաց ընդհանուր ցան- կը ինչպէս ի Կ. Պօլիս Թաղ. խորհուրդը՝ նոյնպէս ալ գաւառաց մէջ Թաղական և Գիւղական խորհուրդը կը շինեն և վա- ւերացեալ մէկ օրինակը Գաւառական վարչութեան կը զրկեն, և Գաւառական վարչութիւնն ալ կեդրոնական վարչու- Թեան :

15. Հաւաքման եղանակը ամեն մէկ գաւառ իրեն յարմար եղած եղանակաւ կը տնօրինէ :

16. Զանազան տեղեր պանդխտող գաւառացին՝ ընտանեօք բնակութիւն հաստատած տեղի ազգային մատուկին կը վճարէ իւր տարեկան տուրքը :

17. Գաւառական այս տուրքն 1875

մայիս 1 էն պիտի սկսի գործադրու- Թեան»,

30 Յունվար 1875

Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ գըզ- րական նախորդ հոգաբարձութեան բազ- մամեայ հաշիւներն՝ վերջին մէկ տարուան մէջ քննութեան այլ և այլ բովերէ անց- նելէն յետոյ՝ մասնաժողովոյ մը յանձնուած էին Թաղական խորհուրդոյն կողմանէ, և Թաղեցին ամենայն հետաքրքրութեամբ կսպասէր այս մասնաժողովէն տրուելիք տեղեկագրոյն : Բայց զարմանօք ըսեցինք, թէ սա ալ քանի մը նիստ ընելէն յետոյ՝ քննութեան գործը գաղտնեցեալ, և առ այժմ երկու անգամայն ստորագրու- Թեամբ հրատարակելի մ'ուղղուեք է առ Թաղական խորհուրդն : Արդ՝ կիմաց գիտ- նալ թէ խորհրդարանը ինչ նոր միջոց ձեռք պիտի առնու՝ այս գայթակղական խնդրոյն կարգադրութեան համար :

Մեր այս անգամ այսչափ տեղեկու- Թիւն տալէն յետոյ՝ յիշեալ հրատարա- գրոյն պատճէնը կհրատարակեմք, որ է՝

« Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի Թաղ. խորհրդոյ Սէլամիլէի :

« Վերջին օրերս գանազան Թաղերու մէջ տեղի գտած Թաղային հաշուական խնդիրներ երթալով կնճռալից կերպա- րանք կառնեն դժբաղդաբար, ինչպէս և Սէլամիլէի Թաղը : Սոյն ցաւալի կա- ցութեան մէջ մեր գիրքն ու պաշտօնը չեն ներեր այլ ևս էսմէրեան կարապետ Էֆէնտիի հաշուց քննութեան պաշտօնն շարունակել, և պարտաւորած եմք հրա- ժարիլ՝ պատուարժան խորհրդոյդ մեզ յանձնած պաշտօնէն :

« Խնդրելով որ ներողամիտ գտնուիք մեր այս հրատեղութիւնը,

Մնամք յարգանօք
Կ. Յ. Հաճեան
Կարողեք խաղաղութեան

16 փետ. 1875
Իւսկիւտար

Հիւանդանոցի գրասենեակէն,

... Խմբագիր.

Ազգ. Հիւանդանոցի յարկերուն սօ- պաներն կարգադրելու հոգը սօպաճի մեծ. Բարսեղ Էֆ. Ղազարսեան այս տա- րի ևս իւր սովորական աղքատասիրու- Թեամբը վրան առնելով բարեհաճեցաւ իւր գործաւորաց ձեռօք շինել և պատ- րաստել զանոնք ձմեռուան եղանակին մէջ, իւր կողմէ հատուցանելով գործա- ւորաց վարձքը, որոց արժէքը հազար զրջի կը հասնի :

Հոգաբարձութիւնն այս մասին իւր խո- րին շնորհակալիքը հրատարակաւ յայտ- նելով,

Կը մնայ յարգանօք
ի գիմաց Հոգաբար. Հիւան.
1875 փետր. 17 Սեւեթի Մանուկեան
Գրասեն. Հիւան.

ՀՐԱՒԻՐ ԱՌԱՋԳՈՅԻՆ ԵՐԵՄՓՈՍԱՆՈ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջի- կայ փետր. 21 ի Ղալաթիա :

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամը 6 ին և գոցուի 10 ին :

Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնտիներ- րը՝ իրենց ազգասիրական պարտականու- Թիւնը կատարելու փութալ :

1875 փետր. 15 Պատրիարք
Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլսոյ
Կ. Պօլիս Երեսն Արեւիկայոյ

Օրհուրդ :

1. Մտադիր ազգային տրոց (եթէ Հա- մարակալութեան դիւանին տեղեկագիրը պատրաստ ըլլայ այս նիստին) :

2. Կալուածոց դիւանի տեղեկագիրը՝ ազգային վանօրէից համարաւութեան վերաբերեալ :

3. Փոփոխելի տրամադրութիւնք Սահ- մանագրութեան. -վերաքննիչ յանձնա- ժողովոյ ծրագիրը :

Ատենագիր
Ս. Պ. Պ. Փափագեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պէրուժի կառավարիչը, Բ. Դրան հը- րամանաւ, Հասունեանց ձեռքը մնացած մէկ եկեղեցին ալ Հակահասունեանց յանձնեք է, առանց որ և է խռովութեան :

— Կըսուի, թէ Շիրքէթի-Խայրիլէի նախորդ տնօրէն Հիւսէյին Էֆէնտիի պի- տի յանձնուի՝ Աղիլիլէի շոգենաւուց վը- րատեսչութիւնը :

— Բ. Դրան օտար թղթակցութեան դիւանին անդամներէն Ֆէյլի պէյ՝ վի- էնայի օսմանեան դեսպանատան երկ- րորդ քարտուղար կարգեցաւ :

— Բ. Դուռը Սպանիոյ դէմ բողոքա- գիր մը ուղղել է եւրոպական մեծ տէ- րութեանց՝ Արֆօնտի Թագաւորութիւնը վիէնայի սպանիական դեսպանին միջո- ցաւ Բումանիոյ իշխանութեան ի պաշտօ- նէ ծանուցուելուն պատճառաւ, որով Բումանիա իբրև բողոքովին անկախ կա- ռավարութիւն մը համարուած կըլլայ :

Գերմանիոյ կառավարութիւնն ալ ցա- ւեր է Սպանիոյ դէմ, գերմանական փո- քըը իշխանութեանց ուղղակի ծանուց- ուելուն համար :

— Կայսերական կառավարութեան հաշուէկշիւն շինելու համար յանձնա- ժողով մը կազմուած է, որոյ անդամք են՝ հասարակային շինուածոց պաշտօն- եայ Էտհէմ փաշա, Շուրայի-Տէվլէթի անդամներէն Սէրվէր փաշա, Բուսու- մաթի վերատեսուչ Ղալիպ պէյ, Օսեան Էֆէնտի, Խրիսթաքի Էֆէնտի, Կէօչե- եան Էֆէնտի, և Օսմանեան պանքային տնօրէններէն մին : Այս յանձնաժողովը առաջիկայ շաբթու մէջ կսկսի նիստ ը- նել :

Թարսուսի Միւֆթի Ահմէտ Հիւ- մի Էֆէնտի՝ որ բարձրապատիւ մայր Թագուհւոյն կողմանէ մայրաքաղաքս հը- րաւիրեալ և կայսերական պալատան մէջ հիւրընկալեալ էր, շաբթ անուառ յան- կարծ մեռաւ :

Սա Թարսուսի երեւելի և հարուստ գերդաստաններէն էր, և մայր Թագուհ- ւոյն շատ սիրելի ըլլալով իրեն եղած ջը- նորհները հայրենեացն օգտին յատկացու- ցած է : Որդին՝ Խամայիլ Հադգը Էֆէն- տի՝ Իճրա-ճէմիլէթի անդամ է :

— Բումիլի շոգեկաւքը, անցեալ ե- րեքշաբթի օրը Մագրի գիւղի, և քանի մ'օր յառաջ ալ Այի-Սթէֆանոյի կողմերը դժէն դուրս ելեր է, բայց քիչան բա- րեբաղդաբար միայն երկաթուղոյն ե- ղեր, և շուտով նորոգուեք է :

— Անցեալ 1873 ին, Բումիլի երկա- Թուղիէն՝ 19 միլիոն 375 հազար 375 Ղ2 հասոյթ եղեր է :

— Պէշիկթաշի ոստիկանութեան տեսչին աշարջութեան շնորհիւ աւազակաց ընկերութիւն մը երեւան ելեր է, որ 35 անդամէ կը բաղկանայ, և 25ը՝ իզմիր, և 10ը՝ իրենց գլխաւորին հետ մայրաքաղաքս կը գտնուին եղեր: Ասոնք ժամանակէ մը հետէ մայրաքաղաքիս այլեւ այլ կողմերը տուն ու խանութ մտնելով՝ գողութիւններ կ'ընէին:

— Ոստիկանութեան պաշտօնատան կողմանէ կ'ծանուցուի, թէ ամէ մը հետէ Մուսթաֆա իզգէթ էֆէնտի ստորագրութիւնը կեղծելով, յանուն նորին ասոր անոր հրաւիրանաց գիր տանող և երբեմն բան մը կորզող Ֆայիզ անուն անձն, և միանգամայն տուներ երթալով, ու մեր էֆէնտին ձեր էֆէնտիին տեսութեան պիտի գոյ ըսելով՝ գողութիւններ ընող Յարութիւն անուն մէկն բռնուած ըլլալով, — այսպէս գողցուած բան ունեցողները յիշեալ պաշտօնատունը կը հրաւիրուին:

— Անցեալ ուրբաթ երեկոյեան դէմ, Գատը գիւղի նաւամատուցին կողմերը լուսոյալովս մը ըստ սովորութեան սընտուկին մէջը գտնուած ամբողջ դրամագրութիւն՝ 200 իրա՝ պայուսակը դրած, մերձակայ փուռը գացած ատենը, ետեւէն խրվաթ մը խեղճին գլխուն ուժգին հարուած մը իջեցնելով, զանի այլ յայլմէ ըրեր, և պայուսակն յափշտակեր փախեր է: Տեղւոյն ոստիկանութիւնը հետամուտ է խրվաթին:

— Գարատաղի աղբային ժողովը բացուեր է: Իշխանը պաշտօնէից և մետրապօլիս հետ խորհրդարանը երթալով՝ ատենախօսութիւն մ'ըրեր է, որով կը ծանուցանէ 1868 էն՝ իւր գահակալութեան հետէ՝ ըրածները, և գահակալութեանէն յառաջ երկրին ունեցած վիճակը: Գահակալութեան օրը Գարատաղի մէջ միայն վեց դպրոց կար. իսկ այժմ մինչև 50 հասեր է վարժարանաց թիւը, և այս վարժարանաց մէջ ուսում աւանդնողներն այժմ գասախօսութիւն կ'ընեն. աղջկանց համար ալ մեծ վարժարան մը հիմնուեր է: Իշխանը՝ միանգամայն տեսութեանց և իշխանութեանց հետ Գարատաղի յարաբերութեանց գոհացուցիչ ըլլալն յայտնէր, և ժողովոյն յանձնէր է որ երկրին օգտակար եղած առաջարկութիւններն ընեն իրեն, վստահ ըլլալով որ ամենայն փութով ի գործ պիտի դրուին:

— Ժողովը գահութեամբ լեր է իշխանին այս ատենախօսութիւնը, և Պօտլոսիցայի վերջին դէպքին վրայ դռնփակ նիստ մ'ընելէն յետոյ՝ հրապարակային նիստերն սկսեր են:

— Բուսնուգի ոստիկանութեան հազարապետն, ինքզինքը թունաւորեր սպաններ է, ոստիկանութեան սնտուկէն 250 հազար զը բացն ըլլալուն պատճառաւ:

— Թէքիրտաղէն գրուածին նայելով, արջաւոց հիւանդութիւնը նոյն կողմերը օր յօրէ կատարական, և սատակեալ արջաւոց դիակներն բացը ձգուելուն պատճառաւ՝ կ'վախցուի թէ մարդոց մէջ ալ հիւանդութիւն տեսնուի: Արդէն ոչխարաց մէջ ալ հիւանդութիւնը ճարակեր է:

Տեղ տեղ սատակեալ ոչխարաց վորը ճեղքելով, ճերմակ լեարդին վրայ մաղ տեսնուեր է. այս մաղը ոչխարին մինչև կօկորդին վրայ աղդեցութիւն կ'ընէ և շնչառութիւնը կարգելու եղեր: Հովիւք կ'ըսեն, թէ այս հիւանդութիւնը՝ ձմեռը ճարակ չըլլալուն պատճառաւ անասնոց հողով սնունդ առնելէն յառաջ կուգայ: Շատ ոչխարք ծնելէն յետոյ կատակին, և գաւառիկներն ալ ողջ չեն մնար:

— Գիշ մնացեր է, որ Սպանիոյ թագաւորը Բարլոսեանց կողմանէ գերի բռնուի կամ վերաւորուի: Արդէն իւր մէկ թիկնապաշտ, հազարապետ մը և իրեն մերձակայ եօթն անձինք վերաւորուեր են: Այս դէպքին վրայ, հարկագրեր է Մատրիտ խոյս տալ, մինչդեռ յառաջ կ'ալնդէ եղեր՝ բանակատեղին մնալ: Վերջին լուրերուն նայելով, Բարլոսեանք դարձեալ զօրացեր, և ձեռք անցուցեր են իրենցմէ գրաւեալ տեղերը:

Ալֆօնս թագաւորն այսպէս խախուտ վիճակի մէջ կ'գտնուի, և միշտ կասկածանաց ու յուզման մէջ է: Հասարակապետութեան ատեն նախարարաց գըլուխ գանուող Պ. Ժօրիլայի Մատրիտ մտնելը լուսուող պէս, տունը կ'ստուեր, խուզարկութիւն եղեր, և 24 ժամու մէջ ընդ հսկողութեամբ ոստիկանութեան դուրս հանուեր է Սպանիայէն:

— Անդղիոյ թագուհին, և Գաղղիոյ գահակալոցս կայսրուհին, մէկմէկու զըրկեր են՝ իրենց ամուսնոց կենսագրութիւնները:

— Հռոմոյ Պապը մօտերս օր մը ըստ սովորութեան վատիկանի պարտիզին մէջ պարտած ատենը, յանկարծ մարեր ինկեր է, և շուրջը գանուողները վերուցեր սենեակը տարեր ու հոն դատաւարներ է: Բժիշկը կ'ըսեն թէ ծերութեան պատճառաւ յաճախ այսպէս ըլլալուն երկիւղ կայ:

— Գերմանիոյ կառավարութիւնը, օտար երկիրներ 800 պաշտօնակալ ունի, որք են ընդհանուր հիւպատոս, հիւպատոս, փոխ հիւպատոս, թարգմանք, և այլն: Տաճկաստանի մէջ այսպիսի պաշտօններով գանուողներուն թիւն՝ 50 է:

— Սպանիոյ թագաւորին մեծ քոյրը այս օրերս փարիզէն Մատրիտ համար ճամբայ ելեր է, և մայրն ալ իզապէլլա՝ ամառը որդւոյն քով անցունել մտադիր է եղեր:

— Հռոմոյ Պապը այս անգամ դարձեալ շրջաբերական մը հաներ է, որով անընդունելի կ'հրատարակէ Գերմանիոյ կրօնական կանոնադրութիւնը, և կրանագրէ՝ այդ կանոնադրութեան հպատակող համայն եկեղեցականները:

— Գերմանիոյ կառավարութիւնը, որ Պէլիրատէն իւր հիւպատոսը ետ կանչած էր՝ առաջնութեան ծանուցեալ ինդրոյն պատճառաւ, դարձեալ պիտի զրկէ եղեր:

ԱՄԵՐԻԿԱՅՈՒ ՄԷՉ ԳՈՂՑՈՒԱԾ ՏՂԱՆ
Շար. Դե. Բե. 962 և 45Է

Այս իրողութիւնը անմիջապէս ֆիլատէլիա հեռագրուեցաւ, որ բաւական

յուզմունք պատճառեց: Ուստի Ուալթըր Բօսս և Ճէրմըն-Թաունի պարտիզպան մը, Պ. Ֆալլական անուն, ճամբայ ելան դէպ ի Մօրկ, ուր կը կենային վերոյիշեալ երկու գողերուն դիակները՝ երկու գաղաղներու մէջ: Իրենց հաղուստը և իրենց մարմնոյն գարշելի դէմքը կը ցուցնէին թէ այս վերջին ժամանակուան մէջ վարած կեանքերին ո՛ր աստիճան տաժանելի էր: Ուալթըր, գողցուած տղուն եղբայրը, դիակաց կեցած սենեակը տարուելով, հոն ինքզինքին թողուեցաւ՝ առանց որ և է հարցման: Մորա յիշողութիւնը կամաց կամաց արթննալով, վերջապէս երբ Բլարքին (Տուկլաս) դէմքը տեսաւ, մէկէն ի մէկ գոչեց:

« Ահա սա էր կառքը վարողը », և այնուհետեւ պարագայներ իր յիշողութեան մէջ իրարու յաջորդելով սկսաւ միտա մի պատմել ինչ գեր որ ունեցած էր ասոնցմէ ամէն մէկը այս յափշտակութեան ատեն: Նամանակէս Բալլական ալ հաստատեց թէ՛ Մասնք էին ճշմարիտ գողերը: Այսուհետեւ պէտք եղած քննութիւնը վերջանալով և ճշմարիտ գողերը ըլլալնին հաստատուելով, կառավարութեան կողմէն հրաման տրուեցաւ՝ սոյն երկու գողերուն դիակները քօտիկին Մօրկըրի կողմէն ցուցուած անձի մը միջոցաւ թաղել:

Սակայն և այնպէս տղան դեռ չէր գտնուած: Ուստի կառավարութիւնը իւր ուշադրութիւնը այս կէտին վրայ դարձուց, որովհետեւ կը վախցուէր որ չըլլայ թէ՛ այս գողերուն մահուամբ տղան ալ պահուած գաղտնի տեղը կենալով մեռնի: Արդ՝ այնպէս կարծուելով թէ՛ Մօրկըրի կինը և եղբայրը՝ Չարլի Բօսսին պահուած տեղը դիտնալու են, կառավարութիւնը զանոնք ալ հարցաքննութեան ենթարկելով տեղեկացաւ թէ՛ իրենք բնաւ տեղեկութիւն չունին: Ասկէց զատ կառավարութիւնը իմանալով որ Լօնկ-Այլընտ-Սառնտ ըսուած կղզիներէն միոյն մէջ, բնակիչք թող չեն տար դուրսէն մարդ ցաճաքը ելնելու, կասկածեցաւ թէ չըլլայ որ տղան հոն պահուած ըլլայ. ուստի բուսական մեծ դժուարութեամբ և միանգամայն նաւարեկութեամբ կառավարութեան պաշտօնեայները ցամաքը ելնելով իմացան թէ՛ ժամանակէ մը ի վեր դուրսէն գողեր ներս մտնելով կղզեցւոց վնաս հասցնելուն պատճառաւ, ի գողութիւն և ի պահպանութիւն կղզւոյն՝ արդեւք դրած են եղեր դուրսէն մարդ ներս չմտնել: Այսուհետեւ կուգայ ուրիշ դէպք մ'ալ: Իրլանտացի ծեր կին մը՝ որ Մօրկըրի բարեկամուհիներէն մին էր, և որ դիպուածով Պրուքլին և Նիւ-Խօրք գացած էր, երկու տղայ ունէր, որոնց մին՝ Չարլին դէմքն ու տարիքը ունէր. իւր վարմունքը կասկածելի կերեւէր, և այնպիսի կերպարանք մ'ունէր զոր տեսնողը կը կարծէր թէ այս կինը տրուած է տղան՝ պահելու համար: Ասոր տունն ալ խուզարկուեցաւ, և իրեն հարցումներ ալ եղան. բայց նա յայտնեց թէ՛ ինքը այնպիսի բանէ մը տեղեկութիւն չունի. և թէ՛ ունենար ալ նէ՛ չպիտի զրուցէր: Այս քննութիւնը բաւական ժամանակ տուելով՝ այս կինը վրայ եղած կասկածն ալ

վարապետացաւ : Սոյն կնոջ և Մօղիբըրի եղբորը հարցաքննութեան միջոցաւ Մօղիբըրի ուրիշ երկու ընկերներն ալ գտնուեցան Պալիմօրի մէջ , ուր խիստ տառապելի կեանք մը կը վարէին . և Ֆիլաթէլֆիա բերուեցան : Ասոնք՝ որ արդարեւ գողցուած ինչքերը պահելու պաշտօն ունէին , իրենց գիտցածնին պատմելով , նորէն Պալիմօր վերադարձան :

Թէպէտ Մօղիբըրի ազգականներուն և ընկերներուն միջնորդութեամբ կը շարունակուի այս խուզարկութիւնը , սակայն և այնպէս Չարլիին ուր պահուած լինելուն գաղտնիքը Մօղիբըրի սրտէն դուրս ելած չէր , անանկ որ ոչ ֆիլաթէլֆիա ըսած էր և ոչ ալ կնոջը յայտնած : Պէյ Պրիճ պատահած ողբերգութեան մէջ նիւթական պատիժներէն էն մեծ պատիժովը պատժուած էին յանցաւորները : Այսպէս ապարդիւն խուզարկութեամբ բաւական ժամանակ ալ անցնելէն յետոյ , կառավարութեան ուշադրութիւնը ուրիշ կէտի մը վրայ դարձաւ : Անանուն նամակ մը երևան ելաւ , որով նամակագիրը 3000 տօլար կը պահանջէր , տղուն գաղտնիքը յերևան հանելու համար : Հետեւաբար դեկտ. 21 ին Բեռլին Լեքսը ըսուած պաշտօնական թերթին միջոցաւ ազգարարութեան թէ՛ պահանջուած 3000 տօլարը կը տրուի : Ասկէց զատ , ուրիշ երկու նամակներ ալ երևցան , որոնցմէ մին մեծ կարևորութիւն ունէր : Նամակին պարունակութեանն այնպէս կը հասկըցուէր թէ տղան կամ նամակագիրն քովը , և կամանոր ծանօթ ուրիշ տեղ մը կ'ըլտնուի : Բաց ասկից , նամակագիրը ապահովութիւն ալ կուզէ որ իրեն փնտռու չհասնի : Այս նամակներուն գրերը Մօղիբըրի գրած նամակներուն գրերէն , և թուղթն ալ վերջինին թուղթէն տարբեր էին : Այս երկու նամակներուն պատասխանները դեկտ. 23 ի Նիւ-Եօրք-Հէրըլտի մէջ հրատարակուեցան , որք կը խոստանային խնդրուած փոխարկութիւնն ու ապահովութիւնը :

Մի և նոյն ժամանակ փոխարկութիւնը ամեն գլխաւոր թերթերուն մէջ հրատարակուեցաւ : Պ. Բրիտան , Բ. Բոստ ալ հրատարակել տուաւ նոյն օրը , այսինքն դեկտ. 23 ին , թէ՛ թուականէն մինչև 40 օր ո՛վ որ իւր տղան իրեն վերադարձնէ , կամ իւր պահուած բուն տեղը իմացնէ , 5000 տօլար փոխարկութիւն պիտի ընդունի , առանց իրեն աւելի բաներ հարցնելու և առանց զինքը արդարութեան մասնելու . յաւելլով միանգամայն թէ՛ տղուն յախշտակիչները Պէյ-Պրիճի մէջ (այսինքն ի Լօնկ-Այլընտ-Սառնա) սպանուած են : — Եօթն տարբեր նամակներ ալ հասան Պ. Բրիտան Բ. Բոստի , որոնք կը խոստանային որոշեալ հինգ տեղերէն միոյն մէջ տղան յանձնել , այսինքն կամ ի ֆիլաթէլֆիա , կամ ի Նիւ-Եօրք , կամ ի Պոսթըն , կամ ի Ուոլինկթըն և կամ ի Պալիմօր : Վերջին հրատարակութեանն ետքը շարքով մը անցաւ , բայց իրական արդիւնք մը չարտագրուեցաւ , և վերջին նամակներէն զատ ուրիշ նամակներ չկրկուեցան : Ենթադրեալ Չարլիներ գտնուեցան Մօրիսթաունի և Նիւ Չըրչիլի , ի թաքայի և Նիւ-Եօրքի մէջ , բայց և ոչ մին՝ խնդրուած Չարլին չէր :

Վերջապէս , թէ և ամենայն հաւանականութեամբ Չարլին ողջ լինելը կ'արժուի , բայց և այնպէս կառավարութիւնը որ մինչև ցայսօր իւր խուզարկութիւնները կը շարունակէ և դեռ պիտի շարունակէ , դեռ յաջողած չէ գտնել , և չը կարծուիր թէ պիտի կարելի ըլլայ գտնել , քանի որ գաղտնի պահուած տեղը գիտցող Մօղիբըր սպանուած է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Փետրվար 18

Table with 3 columns: Item description, Unit, Price. Includes items like 'Քօնսոլիտէ', 'Սօսիէթէ Ժէնէրալի բաժինք', 'Քրէտի', 'Երկաթուղեաց', 'Թրամուէյ', '1865 ի փոխառութիւն', '1865 ի', '1869 ի', '1872 ի'.

ԾԱՆՈՒՑՄՈՒՆԻՔ

Հայերէն գաղութեան և եկեղեցական երաժշտութեան հմուտ մէկը՝ պատրաստ է դասախօսել թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ դաւառաց վարժարանաց մէջ :

Ուղղը կը հրաւիրուի առ անօրէնութիւն լրագրոյս :

ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

ԿՍՄ

ՄՐՏԻ ԳԻՐԲ ՄԸ

ՀԵՂԻՆԱԿ ԻՐ. ՄՍՐՎԵԼ

Այս գիրքը՝ զոր իզմիրի Տէտէեան տպարանն ի լոյս բնծայած է , մեծ Մամուրեան թարգմանած է անգլիականէ , և կըսէ թէ՛ « ոչ միայն զուարճալի՛ այլ և օգտակար կ'լինի այն հայ երիտասարդաց , որ ամուսնութեան խորհուրդը կոկոսին տածել , խիստ անբընական պայմաններով անոր լուծը կրելու կը ջանան » և ապա իրենց անխոհեմութիւնն զանազան նեղութեամբ կ'ուժեն . կամ անոնց՝ որ ամուսնութեան միայն ախուր կողմը կ'ընտան , անոր մէջ մեծութիւն և փառասիրութիւն կ'երազեն և ահաբեկ կ'կասին , անոր բուն նպատակն ըմբռնելու բարոյական արիւթիւն և իմացողութիւն չունենալով , և լաւ ևս կ'համարին ամուսնութեան , և շատեր՝ ապօրէն ու շուայտ յարաբերութեանց մէջ իրենց բարոյական և նիւթական էութիւնը խանգարել : » - Գինն է 8 զրուշ :

ԶԷՎԱԼԼԸ ԳԸԶՃԸՂԱԶ

ԵԱՆԻ

ՊԵՅՈՂԼՈՒՆՏԱ ՊԻՐ ՎՈՒԳՈՒՍԹ

Այս անունով տետրակ մը՝ որ պիտի բաղկանայ ինը հատորէ՛ ի գին 40 փարայ , կ'ծախուի Պօլիս Զագմուգճըլար-Կօգուշու Գալիֆեանն եղբարց դրատունը , ձեռքէ լրագիր ծախողներուն քով , և Պէյօղլու շիտակ ճամբան ծխալիւծառաց խանութները :

Ինսանա արիւղ օրան սըղը իլէթի սօղուքտան հասըլ օլմագ իսէ տէ պու քէմլը ինչտէ հէնուզ պիր սարը սուտան իպարէթ օլուպ ֆազաթ պուսունն պազըսը վաղթը կէմլը վէ լայըզըլու թէմէլ թուլմուշ վէ պազըսը էթ իլէ քէմլը սրասընտա գալմըլ աղըրյա պաշքաճա մալիւճէ օլունմագ վէ հըֆսըյա Ալահ թալիւս նուզուլ իլէթիմտէն վէ մէրագտան միւնաղատտան արիւղ օլան եէլտէն պաշքա եալընըլ սօղուքտան հասըլ օլան տօղուզ օն սէնէլէ քէմլը օլտտա՛ եինէ շարէսի պուլունմագ վէ էօթիւրիւկէ վէ կէօթիւս թըքանըկընա պէլ կէվէկիլի վէ մագաթտա բէյտաճ օլան սըղըսը

մայասըլա մալիւճէ վէրմէք իւզըլէ սարըլըքտա քէտրի մէշուր Ուստա Սիմօն պուլունուր Մահմուտ-Փաշա ճամիսինին ալիուսունտա օրթատաքի գահվէտէ իքթիլա իտէնլէրին գահվէի մէղքիւրտէ կէլմէլէրի վէ իճապընա կէօրէ թարիֆ վէ էտվիէսինի պագմագ իչուն պուսունն աղատէմ իլան էթմիշ իսէտէ մէղքիւր իլէթիլէրին իլավէսի իչիւն պու քէրրէ էինէ իլան իտէր :

Վէ սըղը իլէթի 24 ստաթտա տըշարը չըգարըլմ վէ գասըք իլէթիլին իճրասընտա պուլունուրուզ :

Գարնընտա պատուր օլան պիլ սանճը վէրիր իսէ օնունտա իճրասընտա պուլունուրուզ : Ս.

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏԻ ՀՈՂՈՒԻԷԻ

Լեարդի , ստամոքսի , և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը , նաև զղային տկարութեան , ուժաթափութեան և տխրութեան համար . կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը : Սրտի և երկկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի . արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ , և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն , կուծուութիւն , մաղձային հիւանդութիւններ , որովայնի մէջ լեցուած կաղեր , գլխի ցաւեր կը վանէ . մարսողութիւնը կը շափաւորի , և մարմինը մաքրութեամբ բոլոր այն աղտոնութիւններէ՛ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան , առողջ , ուժեղ , և բնական դերքը կը դնուի :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՂՈՒԻԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը . հին կամ նոր թունաւոր վէրքեր , ուռեցք , քաղցկեղ (շերիփէնջէ) , սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կ'աւանան . օգտակար է նաև հարբուիսի , հաղի , սրտի բարախման , մանաւանդ օղաքաւ (եէլ) ըսուած հիւանդութեան : Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (սրբաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմազրաւէ : Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ , որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով , և մասնաւորապէս Պահճէ-գափու թաշ խանի կողմերը Պ. Գասպեանի դեղարանը Նօ. 7 կը ծախուի : Աւելի առնել ուղղը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթոր Հոլլուէի ի Լոնտոն Աքսֆորտ փողոց թիւ 535 :

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

- 1.—Փոռնը 2ՈՐԵԲԵՄԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :
2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիս՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար :
3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :
4.—Տեղագինն ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբաղրութիւնը պիտի վճարէ :
5.—Հատը 40 փարայ է , և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով :
6.—Մանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : Աւելի ատան կըլլայ աւելի անգամներու համար :
7.—Խմբաղրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալահաճեան , Կ. Պօլիս Ալահա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19 :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ Իրգա վազա խան քիւ 3